ԱՆԳՈՐԾՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻՆ ԱՌՆՉՎՈՂ ԻՐԱՎԱԿԱՐԳԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱՆԱՅՄԱՆ ԵՎ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՈՎ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԿԱՅԱՑՄԱՆ ՄԵԽԱՆԻԶՄԻ ՆԵՐԴՐՄԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԻԾ

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

«____» _____ 2022 թվականի N _____ L

ԱՆԳՈՐԾՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻՆ ԱՌՆՉՎՈՂ ԻՐԱՎԱԿԱՐԳԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱՆԱՅՄԱՆ ԵՎ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՈՎ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԿԱՅԱՑՄԱՆ ՄԵԽԱՆԻԶՄԻ ՆԵՐԴՐՄԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 146-րդ հոդվածը և Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի դեկտեմբերի 26-ի N 1978-L որոշման N 2 հավելվածի 47.1-ին կետը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Հաստատել անգործունակության ինստիտուտին առնչվող իրավակարգավորումների վերանայման և աջակցության միջոցով որոշումների կայացման մեխանիզմի ներդրման գործողությունների ծրագիրը՝ համաձայն հավելվածի:
2. Պետական կառավարման համակարգի մարմինների ղեկավարներին՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով՝ իրենց լիազորությունների շրջանակներում աջակցություն ցուցաբերել պատասխանատու մարմիններին՝ սույն որոշման հավելվածով սահմանված գործողությունների իրականացման համար, մասնավորապես՝ օրենքով սահմանված կարգով և ժամկետում տրամադրել հայցվող տեղեկատվություն:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Հավելված

ՀՀ կառավարության 2022 թվականի

----------ի N--L որոշման

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ

ԱՆԳՈՐԾՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻՆ ԱՌՆՉՎՈՂ ԻՐԱՎԱԿԱՐԳԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱՆԱՅՄԱՆ ԵՎ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՈՎ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԿԱՅԱՑՄԱՆ ՄԵԽԱՆԻԶՄԻ ՆԵՐԴՐՄԱՆ

Հ/հ	Գործողության անվանումը	Ակնկալվող արդյունքը	Պատասխանա տու մարմին/ն
1.	Հոգեկան առողջության ոլորտին վերաբերող ՀՀ գործող օրենսդրության համապատասխանեցում միջազգային չափանիշներին, անգործունակության ինստիտուտին առնչվող իրավակարգավորումների մասով, մասնավորապես վերանայել՝ 1) «Հոգեբուժական օգնության և սպասարկման մասին» օրենքը, այն համապատասխանեցնելով «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայի պահանջներին 2)«Սոցիալական աջակցության մասին» օրենքը 3)«Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» օրենքը 4)«Քաղաքացիական օրենսգիրքը»	1. Մշակված բոլոր նախագծերի ընդունմամբ ապահովված են հոգեկան առողջության և մտավոր խնդիր ունեցող անձանց՝ իրենց վերաբերող հարցերում որոշումներ կայացնելու իրավունքը, ամրագրված է այն հիմնական սկզբունքը, որ անձն ունի իր կյանքի վերաբերյալ որոշումներ կայացնելու անօտարելի իրավունք, և նա պետք է վերահսկի իր կյանքը և ընտրի աջակցության այն տեսակը, որն ինքն է նախընտրում: 2. Ընդունված օրենքներով ամրագրված և պաշտպանված են հոգեկան առողջության խնդիր ունեցող անձանց բոլոր իրավունքները (անձնական և ընտանեկան կյանքի, ազատության և անձնական անձեռնմխելիության, առողջության, դատական պաշտպանության, սեփականության, աշխատանքի, քաղաքական կյանքին մասնակցելու և այլն), անկախ նրանց գտնվելու վայրից, անկախ առողջական վիճակից և իրավական ու սոցիալական կարգավիճակներից:	ՀՀ աշխատա սոցիալական հարցերի նախարարութ

5)«Քաղաքացիական դատավարության օրենսգիրքը» և «Վարչական դատավարության օրենսգիրքը» 6)«Ընտրական օրենսգիրքը» 7)«Ընտանեկան օրենսգիրքը» 8)«Աշխատանքային օրենսգիրքը» 9) վերը նշված օրենքներից բխող ենթաօրենսդրական իրավական ակտեր	3. Ամրագրված են նաև դրույթներ, որոնք իրավական հիմք են ստեղծում գործունակության սահմանափակման տարբեր աստիճաններ սահմանելու և դրանք պարբերաբար վերանայելու համար՝ հիմք ունենալով մասնագետների կողմից տրված եզրակացությունները։ ` 4. «Քաղաքացիական դատավարության օրենսգրքով» ամրագրված է փաստաբանի պարտադիր ներգրավումը հոգեկան առողջության խնդիր ունեցող անձին առնչվող դատական գործընթացներում, եթե անձը գրավոր չի հրաժարվում փաստաբանի միջոցով իրավունքների պաշտպանությունից, նույնը՝ «Վարչական դատավարության օրենսգրքում»: 5. «Հոգեբուժական օգնության և սպասարկման մասին» օրենքում կանոնակարգված են հոգեկան առողջության խնդիր ունեցող անձի նկատմամբ անվտանգության միջոցների կիրառման հետ կապված գործառույթները՝ դրանք պայմանավորելով հանրության համար ներկայացվող վտանգի աստիճանի օբյեկտիվ գնահատմամբ: 6. Քաղաքացիական դատավարության օրենսդրությամբ, որպես աջակցող մեխանիզմ, սահմանված է ընտանեկան հսկողությունը, որը կարող է դիտարկվել որպես ազատությունից զրկելու հետ չկապված այլընտրանքային միջոց՝ հարկադիր բուժման կիրառելիության հարցը

		լուծելիս: Ապահովված են նաև հոգեկան առողջության խնդիր ունեցող անձի դատարան դիմելու, արդար դատաքննության, գործունակության սահմանափակման հետ կապված որոշման վերանայման իրավունքները:	
2.	Աստիճանաբար վերացնել հոգեկան առողջության խնդիր ունեցող անձի նկատմամբ խնամակալ նշանակելու ներկայիս գործող ձևաչափը և դատարանի որոշմամբ անձին գործունակությունից զրկելու ինստիտուտը, այն փոխարինելով որոշումների կայացմանն աջակցության մեխանիզմների իրավական կարգավորմամբ, մասնավորապես՝ 1) իրավական ակտով սահմանել աջակցության միջոցով որոշումների կայացման մեխանիզմները և «աջակցողի» կարգավիճակը 2) համապատասխան փոփոխություններ կատարել խնամակալության և հոգաբարձության մարմինների կանոնադրությունում 3) մշակել և հաստատել որոշումների կայացման աջակցման պայմանագրի օրինակելի ձև 4) անձին անգործունակ ճանաչելու և նրա նկատմամբ խնամակալություն սահմանելու գործընթացն ամբողջությամբ փոխարինել աջակցության միջոցով որոշումների կայացման մեխանիզմների ներդրմամբ	Օրենքով ներդրված է հոգեկան առողջության խնդիր ունեցող անձին՝ իրազեկված համաձայնությամբ «ընկերոջ» կամ «աջակցողի» ինստիտուտը, վերջինս հոգեկան առողջության խնդիր ունեցող անձի համաձայնությամբ և/կամ համատեղ կայացնում է որոշումներ, որոնք առնչվում են աջակցություն ստացող անձի կյանքին, գործունեությանը, նրա իրավունքների իրացմանը և այլ հարցերի: Ընդունված է ենթաօրենսդրական իրավական ակտ, որով կարգավորված է աջակցության միջոցով որոշումների կայացման մեխանիզմները և ողջ գործընթացը, հստակ սահմանված են ,,աջակցողի,, գործառույթները, իրավունքներն ու պարտականությունները: 2) Խնամակալության և հոգաբարձության մարմինների կանոնադրությունում ավելացվել դրույթներ, համաձայն որի աջակցության միջոցով որոշումների կայացման գործընթացում այդ մարմինը նույնպես ունենում է իր մասնակցությունը: 3) Աջակցողը գործում է օրինական կնքված	1) ՀՀ աշխատան սոցիալական հարցերի նախարարութ

		պայմանագրի հիման վրա և ընտրվում են բացառապես՝ աջակցություն ստացողի գրավոր համաձայնությամբ: Նա պետք է վայելի հոգեկան առողջության խնդիր ունեցող անձի լիակատար վստահությունը: 4) Մինչև իրենց պարտականությունների կատարմանն անցնելը, «աջակցողը» անցնում է մասնագիտական վերապատրաստման դասընթաց՝ հոգեբուժութ յան, սոցիալական աշխատանքի և մարդու իրավունքների թեմաներով: Նոր գործընթացին անցնելուց առաջ վերապատրաստում են անցնում նաև Խնամակալության և հոգաբարձության մարմինների ներկայացուցիչները:	
3.	Մշակել հոգեկան առողջության խնդիր ունեցող անձի գործունակության սահմանափակման աստիճանը որոշող չափանիշներ՝ ըստ նրանց ֆիզիկական (մարմնական) և հոգեկան (մտավոր) առողջության, հասարակական կյանքում նրանց գործունեության և մասնակցության գնահատման, դրա հիման վրա սահմանել անձանց տարբեր խմբերի գնահատված կարիքներին համարժեք աջակցության ձևերն ու տեսակները: Գործընթացի հիմքում դնել այն հիմնական սկզբունքը, որ գործունակության սահմանափակումը չի ենթադրում անձի իրավունքների և որոշումների կայացման սահմանափակում, այլ միայն	1.Սոցիալական պաշտպանության բնագավառում Կառավարության լիազորած մարմնի ղեկավարի կողմից սահմանված է հոգեկան առողջության խնդիր ունեցող անձանց գնահատման մեթոդաբանությունը և համապատասխան չափանիշները: 2. Սահմանվել են մշակված չափանիշների հիման վրա հոգեկան առողջության խնդիր ունեցող անձանց անհատական գնահատման արդյունքում դասակարգված տարբեր խմբերի համար նախատեսված աջակցութ յան ձևերն ու տեսակները:	ՀՀ աշխատան սոցիալական հարցերի նախարարութ

	հիմք է հանդիսանում աջակցության տեսակի ընտրության համար:		
4.	Ոլորտը ապահովել վերապատրաստված մասնագետներով՝ առաջնորդվելով մասնագետների որակավորման միջազգային լավագույն փորձով	Ապահովված է ոլորտի մասնագետների շարունակական կրթությունը, այդ թվում՝ մարդու իրավունքների վերաբերյալ, ինչպես նաև ներդրված են կիրառվող մոդուլների արդյունավետության պարբերաբար գնահատման մեխանիզմները	ՀՀ առողջապա յան նախարար յուն
5.	Աջակցություն տրամադրել հոգեկան առողջության խնդիր ունեցող անձ խնամող ընտանիքներին, սահմանելով աջակցության տարբեր ձևեր և մեխանիզմներ	1.Ընդլայնվել և բարելավվել է հոգեկան առողջության խնդիր ունեցող անձանց մասնագիտացված տնային խնամքի ծառայությունը, որն արդեն հասանելի է հանրապետության առնվազն 5 համայնքում՝ նվազագույնը 150 անձի հաշվարկով, ինչը հնարավորություն է ընձեռնում ընտանիքի աշխատունակ անձանց լուծելու իրենց զբաղվածության հարցը. 2.Ներդրվել է անձնական օգնականի ծառայությունը՝ առնվազն 2450 անձի հաշվարկով 3.Հոգեկան առողջության խնդիր ունեցող անձ խնամող ընտանիքները ստանում են ամենամսյա ֆինանսական աջակցություն՝ առնվազն 100 ընտանիք	ՀՀ աշխատան սոցիալական հարցերի նախարարութ
6.	Ապահովել պետական կառավարման, դատական մարմինների, հասարակական կազմակերպությունների, ՁԼՄ-ների և ոլորտին առնչվող մասնագետների համար հոգեկան առողջության խնդիր ունեցող անձանց իրավունքների վերաբերյալ իրազեկման	Հոգեկան առողջության խնդիր ունեցող անձանց հիմնահարցերով զբաղվող պետական, տարածքային, տեղական ինքնակառավարման մարնիների, խնամակալության և	ՀՀ առողջապա յան նախարար յուն

աշխատանքներ, դրանց մասնակից դարձնելով նաև խնդիրը կրող անձանց և նրանց ընտանիքներին	հոգաբարձության մարմինների, բժշկական և սոցիալական հաստատությունների աշխատակիցները, հասարակական կազմակերպությունների և ՁԼՄ-ների ներկայացուցիչները, ինչպես նաև հոգեկան առողջության խնդիր ունեցող անձինք և նրանց ընտանիքները իրազեկված են հոգեկան առողջության խնդիր ունեցող անձանց իրավունքների մասին։